**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/32-1-Պ»**

ք. Երևան «06» նոյեմբերի 2017թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Բաբայանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Ընդունել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Այդ դեպքում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 19917600 (տասնինը միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր ) ՀՀ դրամ.

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը.

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում սահմանված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ըստ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների ժամանակին չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակմանը հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011016723
ՀՎՀՀ 01506515

Աշխատակազմի ղեկավար ............................ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**

«[illegible]» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Ծարավ աղբյուրի 55ա
«Հայկոնոմբանկ » ԲԲԸ

Հ/Հ 163058000791
ՀՎՀՀ 00851861

Տնօրեն ............ Գ. Բաբայան
/ստորագրություն/

Հավելված N 1
«06» նոյեմբերի 2017թ. կնքված
«ՍԱԿՆ ՀՄԱ ԾՁԲ 17/32 1 Փ» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | Մատակարարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չմ | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը |
| 10 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 168900 | 1013400 | 6 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 11 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 108600 | 1846200 | 17 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 12 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 172900 | 345800 | 2 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 13 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 298000 | 596000 | 2 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 14 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 2015900 | 4031800 | 2 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 20 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 251900 | 503800 | 2 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 21 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 280000 | 280000 | 1 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 22 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 298900 | 597800 | 2 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 23 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 315700 | 1894200 | 6 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 26 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 668400 | 1336800 | 2 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 27 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 37400 | 374000 | 10 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 28 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 86600 | 2598000 | 30 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 29 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 57300 | 4297500 | 75 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 30 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 194500 | 194500 | 1 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| 31 | 51411130 | Ներկայացվում է ստորև | հատ | 7800 | 7800 | 1 | Ըստ պահանջի | Մինչև 15.12.2017 թ. |
| | Ընդամենը | | | | 19917600 | | | |

* Ծառայությունները մատուցվում են ըստ շահառուների դիմելության:

Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող վերին և ստորին վերջույթների պրոթեզների պատրաստման ծառայությունները մատուցվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, իսկ ծառայությունների մատուցումը կարգավորվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 92-Ա/1 հրամանով սահմանված կարգով, ստորև բերված ցուցանիշներին համապատասխան:

Որոշման համաձայն ստորև բերված չափաբաժինները ստանալու իրավունք ունեցող անձանց /այսուհետ՝ շահառու/ տրամադրվում է՝

## Վերին վերջույթի պրոթեզ

| չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները | |
|---|---|
| 1. Ստանդարտը | **տեղական և ԱՊՀ կամ դրան համարժեք երկրներում թողարկվող նյութերով և տեխնոլոգիաներով արտադրվող** |
| 2. Տեխնիկական ցուցանիշները | Վերին վերջույթների համար հարմար, կոսմետիկ, ձգողական և միո, պահանջվող տեսակի հանգույցներով, ջինս-կաշվի և պլաստիկ նյութերով պատրաստվող<br>Չափերը՝ առողջ վերջույթին համապատասխան |
| 3. Անվտանգությունը | Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը չհրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին |
| 4. Գնման պայմանները | Պրոթեզավորման գործընթացի միջին ժամկետի տևողությունը 15 օրից մինչև մեկ ամիս՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են չափափորձարկումներ, շահառուին սովորեցվում պրոթեզից օգտվելու ձևը |
| 5. Պարագայի տրամադրումը | Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո |
| 6. Երաշխիքային ժամկետը | Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին |
| **Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները** | |
| **Չափաբաժին 10**<br>Նախաբազկի պրոթեզ ՊՈ2-17Պ պլաստիկից | Ձգողական պրոթեզ, ձգանի օգնությամբ ձեռքի մատների շարժումներով աշխատող պրոթեզ, մետաղյա մեխանիզմով:<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրայի 3 հատ գուլպա կամ ծեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրայի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |
| **Չափաբաժին 11**<br>Նախաբազկի պրոթեզ՝ ՊՈ2-18Պ պլաստիկից | Շարժումներ չկատարող կոսմետիկ պրոթեզ<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրայի 3 հատ գուլպա կամ ծեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրայի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |
| **Չափաբաժին 12**<br>Բազկի պրոթեզ՝ ՊՈ4-23Պ պլաստիկից | Շարժումներ չկատարող կոսմետիկ պրոթեզ<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրայի 3 հատ գուլպա կամ ծեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրայի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |

| | |
|---|---|
| **Չափաբաժին 13**<br><br>Բազկի պրոթեզ՝ ՊՌ4-34Պ պլաստիկից | Ձգողական պրոթեզ, ճգանի օգնությամբ ձեռքի մասների շարժումներով աշխատող պրոթեզ, մետաղյա մեխանիզմով<br>*Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 հատ գուլպա կամ ճեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրատի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:* |
| **Չափաբաժին 14**<br>Բազկի միոպրոթեզ՝ ՊՌ4-33ՈՒ Միո | Բազկի պրոթեզ՝ շահառուին հարմար<br>Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 հատ գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրատի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին: |

## Ստորին վերջույթի պրոթեզ

| | |
|---|---|
| **Չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները** | |
| 1. Ստանդարտ | **տեղական և ԱՊՀ կամ դրան համարժեք երկրներում թողարկվող նյութերով և տեխնոլոգիաներով արտադրված** |
| 2. Տեխնիկական ցուցանիշները | Շահառուի ստորին վերջույթների անդամահատվելուց առաջացած առանձնահատկությունների համապատասխան օգտագործվում է շինաներ, կոճեր, հանգույցներ, ինչպես նաև համապատասխան չափի կաշի, կապկա, շտրիպկա, վերտլուգներ, թաթեր՝ մետաղյա կամ ռեզինե |
| 3. Անվտանգությունը | Շահառուին օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը լինեն չկրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ ֆիզիկական պահանջներին |
| 4. Գնման պայմաններ | Պրոթեզավորման գործընթացի միջին ժամկետի տևողությունը 15 օրից մինչև մեկ ամիս՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են չափափոխաճշտումներ, շահառուին սովորեցվում պրոթեզից օգտվելու ձևը |
| 5. Պարագայի տրամադրումը | Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո |
| 6. Երաշխիքային ժամկետը | Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին |
| **Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները** | |
| **Չափաբաժին** 20<br>Ազդրի պրոթեզ /կաշվե/ ՊՆ6-21-1 | Ազդրի պրոթեզ՝ շահառուին հարմար<br>*Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կորոից հարմարանք:* |

| | |
|---|---|
| **Չափաբաժին** 21<br>Ագրրի պրոթեզ /կոսմետիկ երեսապատումով/ ՊՆ6-36 | Ագրրի պրոթեզ՝ շահառուին հարմար<br>*Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք:* |
| **Չափաբաժին** 22<br>Ագրրի պրոթեզ ՊՆ6-35-1 | Ագրրի պրոթեզ՝ կաշվե ծալքատով<br>*Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք:* |
| **Չափաբաժին** 23<br>Ագրրի պրոթեզ ՊՆ6-35 | Ագրրի պրոթեզ՝ լամինացիայի ծալքատով<br>*Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք:* |
| **Չափաբաժին** 26<br>էնդոսկելիտար ազդրի պրոթեզ/պլաստիկից/ ՊՆ9-02 | էնդոսկելիտար ազդրի պրոթեզ՝ պլաստիկից<br>*Անհրաժեշտության դեպքում պրոթեզի հետ տրամադրվում է ամրացնող կտորից հարմարանք:* |

| **չափաբաժնին ներկայացվող ընդհանուր պահանջները** | |
|---|---|
| 1.Ստանդարտը | Ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից նախկինում շահառուին տրամադրված պարագաների ընթացիկ վերանորոգում |
| 2. Տեխնիկական ցուցանիշները | Վերանորոգում՝ ըստ վնասված հանգույցների, նախկին պարագաներին չափսերին համապատասխան, պարագայի ծառայողական, ֆունկցիոնալ և կոսմետիկ վերականգնում |
| 3. Անվտանգությունը | Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը լինեն չիրդմիկող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին |
| 4.Պարագայի տրամադրումը | Տրվում է շահառուին փորձարկումից հետո |

| **Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները** | |
|---|---|
| **Չափաբաժին** 27<br>Վերին վերջույթների պրոթեզներ (հասարակ) | ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ, **ՏԵՂԱԿԱՆ և ԱՊՀ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐՈՎ**, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՀԻՆ ՊԱՐԱԳԱՅԻ ՈՒՆԵՑԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |
| **Չափաբաժին** 28<br>Վերին վերջույթների պրոթեզներ (բարդ) | ՊԱՐԱԳԱՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ, **ՏԵՂԱԿԱՆ և ԱՊՀ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐՈՎ**, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՀԻՆ ՊԱՐԱԳԱՅԻ ՈՒՆԵՑԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |

| | |
|---|---|
| **Չափաբաժին** 29<br>Ստորին վերջույթների պրոթեզներ (բարդ վերանորոգում) | ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ԶՈԳՏԱԳՈՐԾՎԱԾ, **ՏԵՂԱԿԱՆ և ԱՊՀ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐՈՎ**, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՀԻՆ ՊԱՐԱԳԱՅԻ ՈՒՆԵՑԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |
| **Չափաբաժին** 30<br>Բիոպրոթեզներ և միոպրոթեզներ | ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ԶՈԳՏԱԳՈՐԾՎԱԾ, **ՏԵՂԱԿԱՆ և ԱՊՀ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐՈՎ**, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՀԻՆ ՊԱՐԱԳԱՅԻ ՈՒՆԵՑԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |

## Փոքր տրամաչափի սայլակների վերանորոգում

| **Ներկայացվող ընդհանուր պահանջները** | **Չափաբաժին** 31 |
|---|---|
| 1.Ստանդարտը | Ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից նախկինում շահառուին տրամադրած պարագաների ընթացիկ վերանորոգում |
| 2. Տեխնիկական ցուցանիշները | Գործող նորմերին, սայլակների նախկին չափսերին համապատասխան, ֆունկցիոնալ և կոսմետիկ վերականգնում |
| 3. Անվտանգությունը | Նյութերը չիրդեհիկող, թեթև, բավարարեն հիգիենիկ պայմաններին, բավարարեն օրգանիզմի ֆիզիկական վիճակին |
| 4. Գնման պայմանները | Սայլակների վնասվածության բարդությունից ելնելով վերանորոգման ժամկետը տևում է մինչև 3 օր |
| **Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները** | |
| Փոքր տրամաչափի սայլակ | Վերանորոգված փոքր տրամաչափի սայլակը պետք է ունենա պատրաստման պահին ունեցած չափանիշները և հնարավորությունները. |

**Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝**

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ,մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:
4. Շահառուին տրամադրել գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ մատուցված ծառայության, հիմնական տեխնիկական բնութագրերի, երաշխիքային սպասարկման,

պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ՝ ***պարփիրապտուղից սփացած ծնայափով***.

5. Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պարփիրապտուղից սփացած ծնայափով***:

6. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ.

6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

7. Ծառայության մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

8. Յուրաքանչյուր և 2018 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել այն անձանց տվյալները, այդ թվում՝ անուն, ազգանուն, ծննդյան օր, անձնագրի սերիա, պարագայի անվանում, քանակ, հեռախոսահամար, ովքեր չեն սպասարկվել սույն տեխնիկական բնութագրերով նախատեսված պարագաների քանակը սպառվելու պատճառով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ........................ Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ

Տնօրեն ........................ Գ. Բաբայան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«06» նոյեմբերի 2017թ. կնքված
«ՍՍՀԾ-ՀՄՍ ԾՁԲ 17/32-1-Պ» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Դրամական միջոցների նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 10 | 51411130 | Նախաբազկի պրոթեզ՝ ՊՌ2-17Պ պլաստիկից | | | | | | | | | | 334422 | 668644 | 1013400 | 1013400 |
| 11 | 51411130 | Նախաբազկի պրոթեզ՝ ՊՌ2 18Պ պլաստիկից | | | | | | | | | | 609246 | 1218492 | 1846200 | 1846200 |
| 12 | 51411130 | Բազկի պրոթեզ՝ ՊՌ4 23Պ պլաստիկից | | | | | | | | | | 114114 | 228228 | 345800 | 345800 |
| 13 | 51411130 | Բազկի պրոթեզ՝ ՊՌ4 34Պ պլաստիկից | | | | | | | | | | 196680 | 393360 | 596000 | 596000 |
| 14 | 51411130 | Միոպրոթեզ՝ ՊՌ4-33ՈՒ | | | | | | | | | | 1330494 | 2660988 | 4031800 | 4031800 |
| 20 | 51411130 | Ազդրի պրոթեզ /կաշվե/ ՊՆ6-21-i | | | | | | | | | | 166254 | 332508 | 503800 | 503800 |
| 21 | 51411130 | Ազդրի պրոթեզ /կոսմետիկ երեսապատումով/ ՊՆ6-36 | | | | | | | | | | 92400 | 184800 | 280000 | 280000 |
| 22 | 51411130 | Ազդրի պրոթեզ ՊՆ6-35-i | | | | | | | | | | 197274 | 394548 | 597800 | 597800 |
| 23 | 51411130 | Ազդրի պրոթեզ ՊՆ6-35 | | | | | | | | | | 625086 | 1250172 | 1894200 | 1894200 |
| 26 | 51411130 | Էնդոսկելետալ ազդրի պրոթեզ/պլաստիկից/ ՊՆ9-02 | | | | | | | | | | 441144 | 882288 | 1336800 | 1336800 |
| 27 | 51411130 | Վերին վերջույթների պրոթեզների վերանորոգում (ոստառակ) | | | | | | | | | | 123420 | 246840 | 374000 | 374000 |
| 28 | 51411130 | Վերին վերջույթների պրոթեզների վերանորոգում (բարդ) | | | | | | | | | | 857340 | 1714680 | 2598000 | 2598000 |
| 29 | 51411130 | Ստորին վերջույթների պրոթեզների վերանորոգում (բարդ վերանորոգում) | | | | | | | | | | 1418175 | 2836350 | 4297500 | 4297500 |
| 30 | 51411130 | Բիոպրոթեզների և միոպրոթեզների վերանորոգում | | | | | | | | | | 64185 | 128370 | 194500 | 194500 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | 51411130 | Փոքր տրամաչափի սայլակի վերանորոգում | | | | | | | | | | 2574 | 5148 | 7800 | 7800 |
| | Ընդամենը | | | | | | | | | | | 6572808 | 13145616 | 19917600 | 19917600 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ..................... Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պրոթեզաօրթոպեդիկ» ՍՊԸ

Տնօրեն ..................... Գ. Բարայան
/ստորագրություն/

*Հավելված 3*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝ ________ ____________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_ ________» 20 թ.
Պայմանագրի ծածկագիրը՝ ________
Պատվիրատու՝ ի դեմս ________________, ________________, ________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ________________ ________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» « ________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ սույն նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունները | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | քանակական ցուցանիշը: փաստացի | մատուցման ժամկետը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | մատուցման ժամկետը: փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման և ժամկետը ըստ վճարման ժամանակացույցի |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցված են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________ ____________ | ____________ ____________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________ ____________ | ____________ ____________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ __________ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________ -ի
Պատվիրատուի անվանումը — կատարողի անվանումը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. __________ __________-ին կնքված N __________________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի ծածկագիրը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Այս ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________ ______
ազգանուն, անուն

____________ ____________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ

____________________ ___
ազգանուն, անուն

____________ ____________
ստորագրություն